

**ՕՒՄՄԷ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ «ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ 16-ՐԴ ԵՎ 17-ՐԴ ՀԱՏՈՐՆԵՐԸ**

«Մարդկության պատմության մեջ գոյություն ունեցող գիտելիքների պաշարի կողմին, որը կուտակվել է սուտիճանաբար, վերջին տարիներին, հատկապես արվեստի և մշակույթի աշխարհում, գտնվել են իմացական որոշ ուղիներ և ըստ ամենայնի ուսումնասիրվել... Դրանք... կարող են բերել հող ծառայել զարգացնելու, իրագործելու և խոր ուսումնասիրելու միջնակութային այն խրթին երևույթները, որոնք վերջին տարիներին ուղղված են հեռու և լուսանցքային համարվող մշակույթների յուրահատուկ և ինճնատիպ բնույթի ճանաչմանն ու վերականգնմանը: Այն մշակութային նախագիծը, որով առաջնորդվում է ՕՒՄՄԷ հրատարակչությունը, կարելի է տեղադրել վերոնշյալ հեռանկարային պատկերում...»:

Այսպես է բնութագրում իր գործունեությունը Միլանում Մանուկյան ընտանիքի հիմնադրամով ստեղծված ՕՒՄՄԷ (Օժիկ Մանուկյանի անվան սկզբնատաների հիման վրա) հրատարակչությունը, որն անկախ է և նյութական օժանդակությունն ստանում է այն մարդկանցից ու հաստատություններից, որոնք մասնակցում են նրա գործունեությանը: Վերջին տարիներին բազմաճանաչ փաստավավերագրական նյութ է հավաքվել կովկասյան, հայկական և վրացական. ինչպես նաև Անատոլիայի տարածքում գտնված մշակույթների մասին: Այս մեծածավալ նյութը բաժանված է տարբեր նյութերի՝ ներ-

կայացնելով ճարտարապետություն, գեղարվեստ, գրականություն, պատմություն, երաժշտություն և նյութական այլ արվեստներ:

Առ այսօր հրատարակչության նախաձեռնությամբ լույս է ընծայվել գիտաճանաչամտաշեղի բնույթի մի շարք մատենաշարեր:

«Կամար» խորագրով շարքը նպատակ ունի ներկայացնելու ուսումնասիրությունների մի հավաքածու՝ նվիրված սփյուռքահայ արվեստին ու մշակույթին, ընկերաբանական իրադրության այլևայլ հարցերին: Այս մատենաշարում յուրաքանչյուր նյութ հրատարակվում է հեղինակի ընտրած լեզվով: Ց տարվա ընթացքում լույս է տեսել 3 գիրք՝ «Ազգ և կրոն» խորագիրը կրող առաջին գրքի հեղինակն է Անահիտ Տեր Մինասյանը, երկրորդ գիրքը գրել է Դանիելա դե Մագիլո Սլավիչը՝ «Հայերի հայրենադարձությունը պատերազմին հաջորդող տարիներին» վերնագրով: 1988 թ. մարտին լույս է տեսնում շարքի 3-րդ գիրքը՝ «Ղարաբաղ—փաստաթղթեր» վերնագրով, հեղինակներ՝ Սեդրակ Մանուկյան, Հերման Վահրամյան:

«Նրկիճներ և երկրներ» շարքով ներկայացվում են եվրոպացի, ռուս և հայ լուսանկարիչների աշխատանքների համաճաճավ մի ընտրանի, հայկական բարձրավանդակի պատմության և մշակույթի մասին: Հրատարակվել է 2 արքամ. առաջինը՝ «Երմանակով—Հայաստան

1910», Երկրորդը՝ «Հայդուկ—1862-1912» վերահագրերով:

Մյուսինքնի երաժշտական ինստիտուտի գործակցությամբ «Հայ ժամանակակից երաժշտություն» շարժում լույս տեսած 10 պրակների հեղինակն է պարսկախոս կոմպոզիտոր (այժմ բնակվում է Մյունխենում) Լյուդվիգ Քազիրը: Այստեղ տեղ են գտել երգեր Վահագն Դավթյանի խոսքերով, Դանիել Վարուժանի «Հազին երգը» շարժիչ, երգային մի համար գրված մի ֆայլերգ՝ «Մատյան օղբերգության» բառերով, ինչպես նաև միջնադարյան «Կարգ ոտնվայի» ազդրի նիսան վրա ստեղծված մի խմբերգ: Կան նաև միայն երաժշտական գործիքների համար գրված գործեր:

Շրջանառության մեջ են դրվել նաև 2 ձայնագրակ. առաջինը՝ նույն Լյուդվիգ Քազիրի վարիագիստներ Տիգրանյանի թեմաներով, երկրորդը՝ Կոմիտասի երգերի:

Գրական բնույթ ունի «Կոստանան—անդրազարծուներ հայ մշակույթի համար» շարժր, որի միակ հատորում տեղ են գտել Սեդա Կապոյանի, Հարություն Քյուրճյանի և Մարի Լյանյանի հոդվածները:

«Ջրեղունված կառուցվածք» մատենաշարի 2 հատորներն էլ կրում են «Հայկական մշակույթը սփյուռքում» ենթավերնագիրը, որոնց մեջ տեղ են գտել գիտաժողովների էյուրթեր հայոց պատմության, կրոնի, մշակույթի ու արվեստի առաջին միջնի հարցերի մասին:

Առանձին գրքեր են լույս տեսել «Հայկական խոհանոց» (Վերծին Մառնիկյանի աշխատագրությամբ), զանազան այլ գրույկներ, մատենագիտական ցանկեր, ազդագրեր և այլն:

Ճարտարապետության պատմության բնագավառում շատ մեծ է հրատարակչության ավանդը: Լույս է բնծայվում երկու մատենաշար՝ «Ռեսումենտիություններ հայ ճարտարապետության բնագավառում» և «Հայ ճարտարապետության վավերագրեր»:

Առաջինը լույս է տեսնում Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի, ՀեՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի, ՎեՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի, Միլանի Մակրո Կուրե համալսարանի Համեմատական բանասիրության ինստիտուտի և Միլանի Հայ մշակույթ վավերագրական կենտրոնի համագործակցությամբ: Առ այսօր լույս է տեսել 25 հատոր: Հրատարակված շրջառությունները

բազմաժամակ և բազմաբնույթ են: Նրանց շարժում տեսնում ենք հոդվածների ժողովածուներ (Մ 4, 5, 9, 10, 12, 15, 17, 18, 19), առանձին մենագրություններ (Մ 6, 14, 21, 22): Հայ սովետի Բ. և Գ. գիտաժողովների էյուրթեր (Մ 23, 24), Անատոլի Ցակոբսոսի տարբեր աշխատանքները աշխատանքներ հոդվածների համահավաք ժողովածուն (Մ 25) և այլն:

Սակայն ՕՒՄՄԷ հրատարակչության ծավալած ջնդրակալ ու հայոցուտ գործունեության գլուխգործոցը կարող ենք համարել «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարը, որը 1968-ից սկսած պարբերաբար լույս է տեսնում Միլանի պոլիտեխնիկումի ճարտարապետության ֆակուլտետի և ՀեՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի համատեղ ջանքերով: 20 տարվա տևաժան աշխատանքի հետևանքով լույս աշխարհ եկած հատորների շարժում հանդիպում են նաև հուշարձաններ, որոնք այսօր մանրամասնությամբ ընթերցողներին են ներկայացվում առաջին անգամ: Առաջին հետազոտություն են ներկայացրում այն կորոզների ուսումնասիրությունը, որոնք գտնվում են ներկա Հայաստանի տարածքից դուրս՝ Քուրճյանում, Իրանում (Աղթամար, Անի, Քաղնի վանք, ս. Ստեփանոս): Յուրաքանչյուր հատորում գեղեցիկ են աստիճանի և մեթոդական հոդվածներ՝ անգլերեն, իտալերեն և հայերեն, ինչպես նաև առաջին անգամ հրատարակվող բարձրակարգ գունավոր և սև ու սպիտակ լուսանկարներ և յափագրությունների մի ամբողջ շարժ: Վերջիններս տրամադրում է ՀեՍՀ Միլանի հոլանդացի խորհրդի առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչությունը: Մատենաշարի պահանջարկն ու վայելած ժողովրդականությունը այնքան մեծ է, որ լույս բնծայված 17 հատորներից առաջին յոթն ունեցել է 2—3 հրատարակություն: Նախատեսվել է շարժր հասցնել մինչև 30 հատորի, ընդ որում, այնտեղ տեղ կգտնի Արցախի պատմական հուշարձաններին նվիրված երկհատորյակը, իսկ Մ 8՝ «Աղթամար» հատորը լույս կտեսնի գերմաներեն ու ֆրանսերեն լեզուներով ևս, որով 10-րդ դարի հայ ճարտարապետության գոհարը առավել լայն ճանաչման կարժանանա և, ով գիտն, միգրացն նրա ծագման ու ազգապատկանությունը շուրջ ծագած կեղծ ու սուտ վարկածներին վերջ տրվի:

Zartan A., Gandolfo F. PTGHNI/ARUDCH (Documenti di Architettura Armena.—Vol. 16.—Facolta di architettura del Politecnico di Milano; Accademia delle Scienze dell'Armenia Sovietica).—Milano: OEMME Edizioni, 1986.—75 p., fot.

ԶԱՐՅԱՆ Ա., ԳԱՆԴՈՒՅՈՒ Ֆ. ՊՏՂՆԻ/ԱՐՈՒՃ (Հայ ճարտարապետության վավերագրեր, հատ. 16, Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետ, ՀեՍՀ ԳԱ):—Միլան, ՕՒՄՄԷ հրատարակչություն, 1986, 75 էջ, լուս.:

Այս հանրաձայնոր մատենաշարի հերթական՝ 18-րդ պրակը հիմնականում նվիրված է 6—7-րդ դարերի հայ եկեղեցական շենքերից Պողոսիին ու Առուհին: Գիրքը բաղկացած է վաստակաշատ ճարտարապետ Արմեն Զարյանի «Գմբեթավոր դահլիճի կազմությունն ու զարգացումը» և Ֆրանչեսկո Գանդոլֆոյի «Հայկական գմբեթավոր դահլիճները» հոդվածներից, վերջինիս պատրաստած «Համառոտ պատմական ժամանակագրությունից» և Հերման Վահրամյանի կազմած մատենագիտական ցանկից: Սակայն գրքի մեջ, յարհիս հատուկներում արդեն երկրորդ անգամ (առաջինը № 12՝ Անի հատուրում), տեղ է գտել տարբեր դարերի գմբեթավոր դահլիճները ներկայացնող մի հատված. որով ընթերցողին հնարավորություն է տրվում ընդհանուր պատկերացում կազմելու հայ շինարարական գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցիների ծագմանն ու հետագա զարգացմանը: Մեջբերված եկեղեցիների դարաշրջանը ընդգրկում է 7—17-րդ դարերը:

Գրախոսվող գրքի առաջին ուսումնասիրությունում լուսաբանվում է վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության մեջ գմբեթի ծագման հարցը: Այս խնդիրը մասնագետները բազմիցս քննարկել են. սակայն հողվածագրի համակողմանի վերլուծությունը հանգեցնում է հարգելի տրամաբանական լուծմանը: Զարյանը նշում է, որ վաղ միջնադարյան հայկական ճարտարապետությունը զարգացել է հոռմեական ու պարսկական շինարարական մեթոդներից: Գմբեթային ծամանակաշրջանում, որի ծանրության կենտրոններից մեկն է հանդիսացել Հայաստան աշխարհը: Հիրավի, տարբեր քաղաքային կենտրոնների խաչմերուկում տեղադրվող Հայաստանը միշտ էլ իր մշակույթում ունեցել է տարբեր թե՛ արևելից և թե՛ արևմուտքից, որի համար էլ համարի դժվար է որոշել՝ այդ տարբեր հայկականից են անտեղ մյուս ժողովուրդների արվեստներին, թե՛ ընդհակառակը: Միաժամանակ, վաղ միջնադարյան հայ ճարտարապետությունը, որն իրավամբ կարելի է բնութագրել ժամանակաշրջանի ճարտարապետություն էլ անվանել, չէր կարող զարգանալ՝ անտեսելով հնթանոսական շրջանի դարավոր քաղաքայինությունը. աշխարհիկ և պաշտամունեական շինարարությունը: Հետագայում կենտրոնացված շինարարությունից Հայաստանը մաղ միջնադարյան միակ հրկիրն էր, որտեղ միաժամանակ գոյություն էին ունեցել և՛ մեկը. և՛ մյուսը. թե՛ համադրված և թե՛ մեկուսի ձևերով: Հեղինակը սրում է, որ նշյալ շենքերի ներքին տարածության լուսավորությունը ավելացնելու նպատակով հոծ պատերի վրա բացվել են պատուհաններ, ընդ որում, մայր խորանում բացված Տ լուսամուտները խորհրդանշել են ս. Երզրայությունը: Իսկ, ինչպես գիտնականն էլ մի այլ աշխատության մեջ էլ է նշել, եկեղեցու կենտրոնում գմբեթի առաջ-

ցումը նշանակում է սուր շինության (և բրնականաբար՝ հավատացյալների) ձգտումը թեպի երկինք, երկնայինին ավելի մոտ լինելու փափագը: Այս և նման խորհրդանշական այլ միտումներով է, որ ծնունդ է առել գմբեթը, որն իր կենտրոնախույս դրվածով նախնական շինությանն էլ է ավելի համապատասխան ճարտարապետական լուծում: Ստացվել է նախ կենտրոնական 4 սյուների վրա հանգած թաղակապերով առաջացած առատադաշին մի քաղաքային, որից տրոմպների կամ առագաստների օգնությամբ անցում է կատարվել գմբեթի շրջանաձև կամ բազմակիստ թմբուկին: Հետագայում կենտրոնի այս 4 ազատ սյուները փոխվել են որմնասյուների, որով էլ լուծվել է ներքին տարածությունը ընդարձակելու հարցը:

Ֆրանչեսկո Գանդոլֆոյի «Հայկական գմբեթավոր դահլիճները» հոդվածում ուսումնասիրվում են վաղ միջնադարյան դարաշրջանի 4 եկեղեցիներ, որոնք են. Զովաճիի ս. Պողոս-Պետրոս, Պողոսի, Դոմաշենի ս. Քաղնուս եկեղեցիները և Արուհի պալատական տաճարը: Զարտարապետության պատմությունից գիտենք, որ եկեղեցական այս տիպը Հայաստանում առաջացել է 5-րդ դարում, սկզբնական շրջանում՝ արդեն գոյություն ունեցող հնթանոսական տաճարների ձևափոխման հետևանքով, իսկ ինչ անց՝ որպես ինքնուրույն շինության ձև: Խնամադիր շինություններից մեկը հասած ամենահինն է Զովաճիի ս. Պողոս-Պետրոսը, որը կառուցվել է որպես հնթանոսական տաճար, վերափոխվել բրնտոնեական եկեղեցու, ապա գմբեթի հավիլումով այն դարձել է գմբեթավոր դահլիճ: Յ. Գանդոլֆոն համարում է, որ Զովաճին՝ արսիդր անտեսած, սասանյան Ղազա պալատի գմբեթավոր գավիթի նախամուտքի մեկ կրկնօրինակն է: Իսկ Ա. Զարյանի տեսակետից նայելով՝ «տաճար, եկեղեցին, պալատը ամբողջական և ինքնուրույն շենքեր են, որոնք վաղնորարար կապված են իրար, ունեն տիպաբանական, գեղարվեստական և գործառնական ուրույն պատմություն, իսկ պալատական նախամուտքը օժանդակ շինություն է, արդեն կազմավորված կառույցի բաղկացուցիչ մաս, որտեղից չի կարելի շենքի ամբողջությանը հետևել: Ուրեմն հայ վարպետների մրտաճակագած ճարտարապետական այս նոր տիպը շինարարական նոր հնարանների ծնունդն էր և ոչ թե սասանյան պալատին կցված նախամուտքի ներշնչում:

Զովաճիից հետո սկսում են ի հայտ գալ նմանօրինակ նոր շենքեր, որոնց մեջ առ այսօր ամենտեխնիկ կարելի է համարել Պողոսի տաճարը: Դեռևս տարիներ առաջ հայագիտության երախտավոր, Մեծի տանը կրիստոս կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը մանրամասն նկարագրել է սայն եկեղեցին, տալով թե՛ ճարտարապետական և թե՛ գարդարվեստային խոր վերլուծություն: Ըստ մեզ հասած մատենագիտական մի վկայության, 606 թ.-ին գու-

մարվում է եկեղեցական մի ժողով, որին ներկա է գտնվում Խոսեյի անունով մի կրոնավոր Պողոթից: Սյւ փաստը, ինչպես նաև շինության մանրագծին ուսումնասիրությունը (ներին տարածության, գմբեթի ու ծածկի լուծումը, շենքի ընդերկայնական ձգվածությունը, պատմաններին տեղադրությունը, ֆանդակների նոխությունն ու ճեղքությունը), բայց են ավել Գարեգին կաթողիկոսին որոշելու, թե տաճարը գոյություն ունեւ դեռևս 606-ից էլ առաջ: Սակայն Գանդզիսն եկեղեցու կառուցման ժամանակը համարում է 7-րդ դարի առաջին քառորդը:

Դգմաշենի ս. Թադեոս եկեղեցին ժամանակի տեսակետից, ըստ իտալացի գիտնականի, կառուցվել է 7-րդ դարի կեսերին: Զափերով, ինչպես նաև զարդաքանդակային զուսպ նկարազարդ վերջինս գիշում է Պողոսովանքին, սակայն Արուսի տաճարի յուրաքանչյուր մանրամասն վիճակում է նրա պալատական կառույց լինելը: Վերջինիս վրա գտնվում է արձանագրություն, որով կարողանում ենք ճշգրիտ իմանալ նրա շինարարության տարեթիվը՝ 668—672 թթ.: Հովսեփյանի կարծիքով Պողոթի ֆանդակազարդերն ու բազիլիկ շենքերին խիստ նմանությունը հուշում են նրա միջազգետյան ծագումը, իսկ Արուսում, արդեն տեղական հայկական արվեստը հաղթահարելով բազիլիկան, պահպանել է միայն երկարությունը¹: Սակայն Արմեն Զարյանի մեկնարանությունը ավելի համոզիչ է բերում: Ըստ Զարյանի, այդ Յ կառույցներն էլ բնագրվում են վաղ միջնադարի 6—7-րդ դարերով, բայց արվեստի պատմության տեսակետից կարելի է դրանք համարել ուշ-անտիկ կամ դասական շրջանի շինություններ: Այս կառույցների մեծ չափերը, յուսամուտների ֆանդակը, ներքին կամարակապ գմբեթածածկ համակարգը և հունիական օրդերի օգտագործումը, որոնք դասական ճարտարապետության ոչ արևելյան հատկանիշներ են, միաժամանակ բերնորոշ են հայ ճարտարապետությանը: Այնու-

ամենայնիվ Ֆրանչեսկա Գանդոլֆոն Արուսի պալատական տաճարը համարում է վաղ միջնադարյան գմբեթավոր դանին տիպի եկեղեցիներից ամենակատարյալ օրինակը, որում նա տեսնում է քաղակապ ծածկով երկար տաճարային բազիլիկ տիպի և ուղղանկյալ սլացֆով կենտրոնագմբեթ տիպի միաձուլման լուսավորյուն արտահայտությունը:

Հողավածագրն իր ուսումնասիրությունն ավարտում է սիջնադարյան նայնտիպ այլ եկեղեցիների համառոտ նկարագրմամբ ու հողավածում ավելի հանգամանորեն ներկայացված 4 եկեղեցիների հետ դրանց համեմատությամբ: Այստեղ խոսվում է Շիրակավաճի ս. Ամենափրկիչ եկեղեցու (այժմ ֆանդված), Արգինայի պատրիարքանիստ ավերված տաճարի, Մարմարաշենի եկեղեցու մասին, և դրանց միջոցով ցույց տրվում, թե զարգացման ինչ ուղի է տեցել եկեղեցական այս տիպը, որը ուշ միջնադարում պիտի դառնար վանքային համալիրներում լայնորեն օգտագործված այսպես կոչված վանական տիպի եկեղեցի, ինչպես Սանահի-նում և Հաղպատում: Գրում տեղ են գտել այս վերջին տիպի մի շարք օրինակների հակիրճ նկարագրությունն ու վերլուծությունը, հատակագիծն ու մեկ կամ երկու յուսանկար: Դրանց շարքում են Բջնիի, Հաղարծնի, Գոշավանքի, Աշտարակի ս. Մարինիի, Անիի Տիգրան Հոնենցի, Կեչառիսի և վերջապես Շողակաթի եկեղեցիները: Եթե համեմատելու լինենք, կրտեսենք, թե Պողոթի ու Արուսի ընդարձակ շինություններին փոխարինում են վանական ավելի ամփոփ և փոքր ծավալի շենքերը: Շողակաթում միայն (17-րդ դար) փորձ է արված վերադառնալու ճին ձևերին, բայց այնքան էլ հաջող չի համարվում այն:

Ամփոփելով մեր խոսքը, ռզում ենք մեկ անգամ ևս նշել, որ սույն հատորի ընդգրկած թեման, որն է հայ ճարտարապետության ամենաշրջադարձային հարցերից մեկը՝ գմբեթի առաջացումը հայ շինարվեստում և նրա հետագա զարգացումը, յուսաբանվում է ըստ վերջին տեսակետների, որով կարող ենք ասել, թե ինչպիսի ստանում է իր համոզիչ ու ճշգրիտ պարզաբանումը:

¹ Տե՛ս Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատ. Բ, Եր., 1987, էջ 137:

Ulubabian B. Hasratian M. GANDZASAR (Documenti di Architettura Armena.—Vol. 17.—Facolta di architettura del Politecnico di Milano; Accademia delle Scienze dell'Armenia Sovietica).—Milano: OEMME Edizioni, 1987.—67 p., fot.

ՈՒԼՈՒԲԱՅԱՆ Բ., ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ. ԳԱՆԶԱՍԱՐ (Հայ ճարտարապետության վավերագրեր, հատ. 17, Միլանի պոլիտ. ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետ, ՀիՍՉ ԳԱ):—Միլան, ՕէՄՄԷ հրատ., 1987, 67 էջ, լուս.:

Պատմական Արցախի ճարտարապետական գոհարը հանդիսացող Դանճասարին առ այսօր նվիրված են մի շարք աշխատություններ: Նը-

րանցից են՝ Անատոլի Ցախրսոնի «Հայ միջնադարյան շինարվեստի պատմությունը—Դանճասարի վանքը, 13-րդ դար» ընդարձակ հոդ-

վածը (1960 թ.), Բագրատ Ուլուքարյանի «Գանձասար» մեկագրությունը (1981 թ.), Շահեն Մկրտչյանի «Լեոնային Ղարաբաղի պատմա-նարտարապետական հուշարձանները» մեծածավալ աշխատության մեջ Գանձասարին նվիրված հատվածը (հայերենը՝ 1985 թ., ռուսերենը՝ 1988 թ.): Չի կարելի այժառոտ անել հայագիտության երախտավորներ Մկրտչի Բարխուդարյանցի, Հովսեփ Օրբելու, Գարեգին Հովսեփյանի, Համազասպ Ռսկյանի և այլոց արժեքավոր ուսումնասիրությունները արցախյան արվեստի տարբեր բնագավառների, նրանց մեջ և Գանձասարի վանքի մասին:

«Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարի 17-րդ հերթական հատորը ևս նվիրված է Գանձասարին: Սա աննախադեպ մի ճարտարակություն է, իր գունավոր սուանչիլ լուսանկարներով ու պատմաճարտարապետական վերլուծությամբ: Գրքի նեղինակներն են Բագրատ Ուլուքարյանը (պատմական հատվածը) և Մուրադ Հասարաբյանը (ճարտարապետական վերլուծությունը): Սույն գիտնականները իրենց ուսումնասիրությունների թեմային փառ գիտակ են, քանի որ դեռևս 1974-ին նրանց համատեղ ջանքերով է լույս տեսել «Գանձասարի վանքը» հոդվածը Քեյրոսի «Հայկազյան հայագիտական հանդեսի» N 5-ում: Մ. Հասարաբյանը կազմել է նաև վանքի պատմական ժամանակագրությունը և մատենագիտական ցանկը: Գիրքը զարդարող 42 պատկերների մեջ տեղ են գտել ճանրանանաչ լուսանկարիչ Նրմակովի 1910-ին կառաքած նկարները, երբ պատմական այլևայլ դեպքերի բերումով վանքը լքվում է: Գրքում, ի տարբերություն նախորդ հատորների, կան սև էջեր, որտեղ պետք է ավելի լինեին վանքի շափագրությունները, որոնք, սակայն, ուղարկված չլինելու պատճառով չկան:

Պատմական համառոտ ակնարկում, որն այդպես էլ կոչվում է՝ «Պատմական ամփոփ ակնարկ, Չար ոգիների երկրի, Աղվանքի կամ Արցախի շրջանի մասին», Ուլուքարյանը նախ բերում է տարբեր դարաշրջաններում աշխատող ճարտարապետների անվանումները. ուրարտացիների կողմից՝ Արտախունի կամ Ուրտեխե, Ստարաբոնի մոտ հանդիպում ենք Օրխեստիեն ասորեականին, հռոմեացիները այն անվանել են Ալպանիա, որը պարսկերեն նշանակում է «Չար ոգիների երկիր», իսկ հայկական տառադարձությամբ այն հնչում է Աղվանք ևնով: Հայոց պատմության մեջ կոչվում է Արցախ, նաև՝ Խաչեն, իսկ այժմյան աղբյուրներին ներառելով Գարա-բաղ անվանումը նշանակում է «սև այգի»: Հեղինակը գտնում է, թե Արցախը մաս է կազմել ուրարտական քաղաքության, թե Ստարաբոնը այն ֆողաֆական, մշակութային և լեզվական տեսակետով համարում է Մեծ Հայքի մի մասը, թե իշխանական ժողով ունեցող բնակիչների ձուլումից ծնունդ է առել «Առանշանիկ» քաղաքությունը՝ հետագա տե-

ղի հայ իշխանների նախնիները: Ճիշտ է նրկատել նեղինակը, սր «դարերի ընթացքում Արցախն ունեցել է կենտրոնական իշխանությունների բոլորովին անկախ կամ կիսանկախ շրջաններ, պահելով ի զին ամեն բանի իր փառական, կրոնական և մշակութային առանձնահատկությունները մի հողամասի վրա, որ զուրկ է նաև ցեղաբանական միատարրությունից» (էջ 63): Մինչև փոխտոնեության հաստատումը շրջանը դառնում է պարսկական սատրապություն: Հայ պատմիչների վկայությամբ, մինչև փոխտոնեության պետական կրոն հռչակվելը, Արցախում արդեն նոր կրոնը խոր արմատներ ուներ: Հետևաբար Դրիգոր Լուսավորչի՝ այստեղ գործունեությունը ծավալելը զգալի շեղում է: 6-րդ դարում Արցախում հիմնվում է Աղվանք կաթողիկոսական աթոռը, որն իր գոյությունը պահպանում է մինչև 19-րդ դարը: Կաթողիկոսանիստ կենտրոններ են եղել Պարտավը, Քերզակուրը, Գանձակը, Մեծարանը և Գանձասարը: Վերջինս իր այս դերը շարունակել է մինչև 1815 թ.-ը, երբ ցարական կառավարության հրահանգով վանքի կաթողիկոսությունը վերանում է և արտոնվում մետրոպոլիտություն: «Առավել վատթար հարվածն այն եղավ, որ հետագայում էլ մետրոպոլիտությունը տեղափոխվեց Շուշի: Այստեղ փոխադրվեցին Արցախական աշխարհի խոշորագույն հոգևոր կենտրոնի հարուստ ձեռագրերն ու հին օրերի փառավոր հիշատակները, և վանքը համարյա ամայացավ՝ մնալով վաղեմի փառքի լուսապսակի մեջ: Եվ զարմանալի չէ, որ 19-րդ դարի վերջերից մնացած գրավոր վկայություններում և հատկապես տեղագրական երկերում Գանձասարը ներկայացվում է իբրև հազիվ իր գոյությունը պահող մի մենաստան, ճարտարապետական բացառիկ մի հուշարձան, որին սպառնում է անխուսափելի փայլալույսը...»¹:

Երկրորդ հոդվածում ճարտարապետ Մուրադ Հասարաբյանը ընթերցողին է ներկայացնում «Գանձասարի վանքի ճարտարապետությունը» ուսումնասիրությունը: Վանական համալիրը գտնվում է Մարտակերտի վանք գյուղից 1,5—2 կմ հարավ-արևմուտք, Խաչենագետի ձախ ափին, բարձրաբերձ մի բլրի վրա: Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ սույն գյուղը, որն իր անունը ստացել է հայտնի վանքից, նախապես տարածված է եղել Գանձասար վանքի մոտ: Իսկ իր՝ վանքի անունն առաջացել է այն բլրից, որի վրա կառուցվել է, և որի ընդերքում կան քարածախի և այլ մետաղների հանքեր (գանձ-ա-սար): Վանքի մասին գրավոր առաջին տեղեկությունը մեզ է հասել 10-րդ դարի կեսից, Անանիա Մոկացի կաթողիկոսից: Վանքը պահպանել է այդ շրջանի շինարվեստի գլխավոր նվաճումներն ու հատկանիշները, որոնց մեծ մասն այսօր տեղի այլ համալիրներում

¹ Տե՛ս Բ. Ուլուքարյան, Գանձասար, 1981, Երևան, էջ 20:

գոյություն չունեն, դարերի ընթացքում այստեղ կատարված ավերածությունների ու կողոպուտների պատճառով:

Համալիրը բաղկացած է 17-րդ դարում կառուցված ֆռանկյուն շրջապարսպից, որի ներսում տեղադրված են խոշոր կեղեցից, գավիթը, բնակիչի խուցերը, տնտեսական շինությունները, 19-րդ դարում կառուցված դպրոցական երկհարկանի շենքը: Երբեմնի կաթողիկոսանիստ վանքում հավանաբար գոյություն են ունեցել մի շարք այլ շենքեր և՛ վեհարան, գրչատուն և այլն: Սակայն այսօրվա վանքի տարածքում նման շինությունների հետքեր անգամ չեն մնացել: Ժամանակն ու անգույք ձեռներն իրենցն են:

Գլխավոր եկեղեցին՝ Հովհաննես Մկրտիչը, ըստ Կիրակոս Գանձակեցու, 1216-ին կառուցել է տալիս իշխան Հասան Ջալալը: Գանձակեցին, ինչպես նաև Մխիթար Գոշը, նշում են, որ վանքը Խաչենի իշխանական տան համար ծառայել է որպես պանթոն: Եկեղեցին պատկանում է 10—14-րդ դարերում խիստ տարածում գտած վանական տիպի եկեղեցիներին՝ ուղղանկյուն հատակագծի մեջ խաչածև դասավորությամբ: Գմբեթը բարձրանում է խաչի քեների հատման նիշա մեջտեղում: Շինության ներքին տարածությունը բավականին ընդարձակ է: Կան 4 անկյունային երկհարկանի ավանդատներ: Ներքին տարածքի այս ներդաշնակ լուծումին լրացուցիչ շինություն է տալիս նոյն հարդարանքը. բնամառչի զարդաֆանդակները, դեպի ավանդատների երկրորդ հարկերը տանող աստիճանների շքաֆառերը, քմբուկի նիստի ֆանդակուպարոյ երկը, կամարների առամնավոր ու նախշագարդ կաղապարները և այլն:

Միևնույն խնամքն ու ուշադրությունը կարելի է նկատել արտաքին հարդարանքում ևս: Շինության հիմնական ծավալը ծածկված է ասարթեր շափերի որմնակամարներով, որոնք իրենց մեջ պարփակում են եկեղեցու պատուհաններն ու խորշերը: Առավել աչառու են բազմաբնոտ քմբուկի ֆանդակազարդերը: Հովանեցած վեղարը ճանգչում է կրկնակի որմնասյուների խոյակներին: Քմբուկի յուրաքանչյուր նիսա բարձրավիճ ասարթերով է հաջորդից. ուղղանկյունածև պատուհաններ, փոքր սյուներ և զինանիշագիտական մոտիվներ պարունակող խորշեր և այլ զարդային ու խորհրդանշական պատկերներ, ինչպես՝ սրբեր, կենդանիներ, վարդյակներ և այլն: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկու նվիրատուների ֆանդակները, որոնցից յուրաքանչյուրն իր գլխից վերև բռնել է եկեղեցու մանրակերտ: Դրանցից հյուսիսայինն նիստինը զմբեթարդ կլոր տաճար է (հավանաբար Վանառի այժմ գոյություն չունեցող եկեղեցին, դարձյալ կառուցված Հասան Ջալալի կողմից), իսկ հարավայինը խաչածև կենտրոնագմբեթ եկեղեցի է, որ անկասկած Գանձասարի Հովհաննես Մկրտիչն է: Մասնա-

գետների համազմայր երկու իրար շատ նման կոթողական ֆանդակները ներկայացնում են Հասան Ջալալին՝ Վանառի և Գանձասարի եկեղեցիների կառուցումը հովանավորողին: Արևմտյան նակատակալը զբաղեցված է հսկայածավալ խաչաֆանդակով, որի կենտրոնում տեսնում ենք Քրիստոսի կերպարը, իսկ երկու կողմերում՝ ծնկաչոփ անձինք՝ շատ նման հովանավորներին: Սակայն գավթի կառուցումը եկեղեցու արևմտյան կողմում էիչ նհարավորություն է տալիս այս փառավոր և 13-րդ դարի հայ կառույցներում իր նմանը չունեցող հարթաֆանդակի հսաակ երևույթ: Շատ ցանկալի կլինեն վերոնշյալ զարդաֆանդակների մանրակրկիտ և խոր վերլուծության ուսումնասիրությունը ևս տեսնել սույն հատարում, որը մեծ լույս կսփռեր հայ շինարվեստում լայնորեն օգտագործված խորհրդանշանաբանության հարցերին:

Շարունակելով իր հոդվածը, Հասարթյանը նշում է, որ վանքի հաջորդ աչի ընկնող շինությունը գավթին է՝ 1240—1286 թվակիր: Սա իրենից ներկայացնում է ֆռանկոսիի հասնող հատակագիծ, խաչվող կամարների համակարգով: Կամարների հատուկից առաջացած կենտրոնական ֆռանկոսիի զարդարված է շքաֆառերով, իսկ կտուրի փոքր բացվածքի վրա տեղադրված է կանթեղանման երգիկ՝ վերանորոգված 1907-ին: Դավթի ներքին հարդարանքները համեստ են. որմնամույթերն ու սյուները ունեն պարզ խոյակներ, մուտքը դեպի եկեղեցի համարյա անշոփ է: Արտաքինից ևս չափազանց համեստորեն զարդարված այս շինության միակ աչառու նակատը արևմտյանն է, որտեղ զարդանախշ շխմուտի համար իբրև ենթախորհ է ծառայում ամբողջ նակատը: Վանքի մյուս շինությունները (խուցեր, սեղանատուն, դպրոց...) ուշագրավ ոչինչ չունեն:

Մ. Հասարթյանը՝ ընդունելով Ա. Յակոբսոնի, Ս. Մնացականյանի և այլոց կարծիքը, զբոսում է, որ վանքի եկեղեցին ու գավթը 13-րդ դարի հայ շինարվեստի լավագույն կառույցներից են, ընդհանուր շատ եղբեր ունեն (քե՛ հարթաֆանդակական լուծումների մեջ և քե՛ հարթաֆանդակներով). Հառնակվե՛ք, Մսկարավանքի, Բզենե Նորավանքի, Մշկավանքի, Հաղրատի և այլ վանքերի հետ՝ հասնելով մինչև Աղբամար ու Անի: Հետևարար՝ այս գուս հայկական ակունքներից բխած, գուս հայկական ծագում ունեցող վանքը ոչ մի կերպ չի կարող խորթ լինել ազգային շինարվեստի ավանդույթներին, այն հայ ազգային մշակույթի հարտարապետական դարավոր փորձի արգասիքն է: Եվ ինչպես Անատոլի Յակոբսոնն է արտահայտվել՝ «հայ հարտարապետության հանրագիտարանն է»: